Կարգապահական գործ թիվ ԿԳ-18039

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 11-ի թիվ 224-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/172-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱԶԳԵՆ ՍԱՄՎԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վազգեն Սամվելյանին (արտոնագիր՝ թիվ 958) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Վազգեն Սամվելյանն ունի 181.000 (մեկ հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. փետրվարից (1000 դր.) մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

27.02.2018թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 93-Ա/ԿԳ-18039 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Վազգեն Սամվելյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի

կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 05.03.2018թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 11.08.2018թ., ժամը՝ 11:20-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Վազգեն Սամվելյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել: 04.06.2018 թվականին Պալատ է մուտքագրվել Պատասխանողի դիմումը, որով վերջինս նշել է, որ բացակայելու է երկրից և խնդրել է կազմել ժամանակացույց՝ հնարավորություն ընձեռելու համար կատարել մարումներ:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Վազգեն Սամվելյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 24.10.2009թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 15.06.2018թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Վազգեն Սամվելյանն ունի 181.000 (մեկ հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. փետրվարից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Վազգեն Սամվելյանն իր անդամավճարի պարտքը մարել է մասնակի (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 10.08.2018թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 15.06.2018թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Վազգեն Սամվելյանի (արտոնագիր՝ 958, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2013-2018թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված վարույթ): Անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար հարուցված կարգապահական վարությթով ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վազգեն Սամվելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Վազգեն Սամվելյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքով: Ավելին՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանի նկատմամբ նմանատիպ խախտման հիմքով մեկ անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, ինչպես նաև այն հանգամանքը որ փաստաբանը կատարել է մասնակի մարում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.

հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Կարգի 21-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վազգեն Սամվելյանին (արտոնագիր՝ թիվ 958) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Վազգեն Սամվելյանի (արտոնագիր թիվ 958) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վազգեն Սամվելյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/172-Ա
ք. Երևան